274-276 Auf Befehl des Kaisers Aurelianus ließ Procopus Tiridates der Dritte im westlichen Teil Großarmeniens thronen (seit 274 bis 330 = 56 Jahre, wie bei Movses Chorenatzi).

276 Der König Tiridates der Dritte verließ zwangsweise seine Besitztümer, die von den Persern besetzt wurden.

276-293 In Großarmenien übernahm Nerseh Sassanide die Königsherrschaft.

288 Tiridates der Dritte thronte zum zweiten Mal im größten Teil des Territoriums Großarmeniens, während Nerseh den Thron im östlichen Teil Großarmeniens weiter besaß (Die zweite Thronung von Tiridates ist nicht im dritten, sondern im fünften Herrschaftsjahr des Kaisers Diocletianus erfolgt). Movses Chorenatzi hält die 27jährige Sassanidenregierung in Großarmenien für eine fremde Herrschaft, die 261 begonnen und 288 zu Ende gekommen ist.

Die Chronologie der darauf folgenden Ereignisse haben wir bereits in unserem Aufsatz „Ueber das Datum des Christentums als Staatsreligion in Armenien“ recherchiert.

ԴՈՒԻՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՇՐՋԱԴԱՐՁԱՅԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԸ

Գայիանէ Քոչարեան

*Դուինը այն նշանաւոր հնամենի կենտրոններից է, որի հնագիտական շերտերում գրոշմուած է Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային զարգացման ընթացքը: Դուին-Դըւին-Դւին տեղանունը բխում է ՀՆԽ *d[h]eun– = «բնակավայր բարձունքի վրայ» իմաստային բանաձեւից*[1]*: Դուին բազմաշերտ հնավայրը* «բլուրգետ-դաշտ» համալիրի սկզբունքով կազմուած «ամրոց-սրբավայր» *էր՝*

- *մ.թ.ա. III հազարամեակում բլրի գագաթին կիկլոպեան ամրոց, ընտանեկան սրբարաններ.*
- *մ.թ.ա. I հազարամեակի սկզբում բլրի գագաթին ամրոց-սրբավայր, ստորոտին՝ տաճարախիտ սրբավայր, կից՝ դամբարանադաշտ.*
- *Արտաշիսեան շրջանում բլրի գագաթին, մ.թ.ա. Բ դ. կէսերին վերակառուցուած, Արտաշատի խոցելի հիւսիսային մատոյցները հսկող «ամրոց-բնակավայր», ստորոտին՝ իր գործառոյթը շարունակող աւանդական սրբավայր.*
- *վաղ Արշակունեաց շրջանում (Բ դ. երկրորդ կէս, հռոմէական գրաւման տարիներ) բենեֆիցիարիուսների պահակակէտ՝ բլրի գագաթին հրամանատարական դիտակէտ, ստորոտին՝ աւանդական սրբավայրում, ոստիկանական ուղեցոյց-ուղեկալ*[2]*:*

Այստեղ աշխարհիկ եւ հոգեւոր իշխանութիւնների համատեղ տեւական գոյութիւնը պայմանաւորուած էր տուեալ հանգոյցի տեղագրական առաւելութեամբ: Երասխ-Մեծամօր-Ազատ գետերի ոռոգելի հովտում, հիւսիսային թիկունքից Տիկնունիի բարձունքով, արեւմուտքից Ազատ գետով, արեւելքից Ուրծի լեռնաշղթայի բազուկներով ամփոփուած, բնականից լաւ պաշտպանուած բլրի գագաթի ամրոցը՝

- *գերիշխող բարձունքից մշտական տեսադաշտի մէջ էր պահում Երասխի հովտով Արարատեան գոգաւորութիւն մտնող ուղիները.*
- *հսկում էր առեւտրական եւ ռազմավարական միջազգային կարեւորութեան տարանցիկ մայրուղիները:*

Դուինի բազմադարեան պատմութեան մէջ կարեւորագոյն շրջադարձային հանգրուան է նրա արքայանիստ դառնալու պահը:

Խոսրով Կոտակ Արշակունու գահակալութեան տարիներին (330-338) Մեծ Հայքի թագաւորութիւնը դարձեալ յայտնուել էր Հռոմի եւ Պարսկաստանի առճակատման կիզակէտում: Տարածաշրջանում իշխող գերտէրութիւնների սադրիչ գործունէութեամբ երկրում ձեւաւորուել էր ներքաղաքական ծայրայեղ անկայուն մթնոլորտ՝ պետական նոր կրօնի՝ քրիստոնէութեան դէմ ոտնձգութիւններ, միջնախարարական կռիւներ, արտաքին նենգա-

1 **Գ. Քոչարեան**, *Դուին տեղանուան վաղեմութեան հարցը*, «Լրաբեր հասարակական գիտութիւնների», 2000, թիւ 2, էջ 132-137:

2 Դուինի հնավայրն՝ ըստ **Կ. Ղաֆադարեան**, հտ. I, Եր., *Դուին քաղաքը եւ նրա պեղումները*, 1952, էջ 23-24, 60. **A. Kalantarian**, *Dvin. Histoire et archéologie de la ville médievale*, Paris, 1996, pp. 55-57; **К. Х. Кушнарева**, *Древнейшие памятники Двина*, Ер. 1977, с. 7-42; **Գ. Քոչարեան**, *Անտիկ Դուինը Արտաշատի պաշտպանական համակարգում*, «Հանդէս ամսօրեայ», 1996, թիւ 1-12, էջ 346-357. նոյն, *Դուինը վաղ Արշակունեաց շրջանում*, «ՊԲՀ», 2002, թիւ 3, էջ 206-214:

© National Library of Armenia

միտ միջամտութեամբ գահին ու թագին յաւակնող հայ իշխանների խռովութիւններ: Խոսրով Կոտակը, «բարեմիտ հպատակ իշխանների» հետ միաբանուած եւ Վրթանէս հայրապետի ու սպարապետ Վաչէ Մամիկոնեանի գործուն աջակցութեամբ, ի զօրու եղաւ՝

- խստագոյնս պատժել ըմբոստներին, յարքունիս գրաւել անհաւատարիմ նախարարների կալուածքները.
- սպարապետի ընդհանուր հրամանատարութեան տակ դնել բոլոր աւագ նախարարական տների զօրքերը.
- կանխել պարսկական զօրքերի առաջխաղացումը.
- «երկմիտ» իշխաններին արքունիքում պահելով՝ զսպել նրանց անջատողական միտումները.
- դարձի բերել մեծ թուով հեթանոս հայերի[3]:

Կենտրոնացուած ուժեղ իշխանութիւն հիմնելու այս ծաւալուն ծրագրի բուն նպատակի կայացմանը լուրջ խոչընդոտ էր երկրում տիրող բարոյահոգեբանական անբարեյոյս իրավիճակի դրսեւորումը մայրաքաղաքում: Անկայուն իրադրութիւնը Խոսրով Կոտակին դրդեց վճռորոշ քայլի՝ արքունիքն Արտաշատից տեղափոխել Դուին[4]:

Արքունիքը, բազմագործառոյթ եւ ամրաշինական հզօր համակարգ ունեցող, Արտաշատից Դուին տեղափոխելու համար անհրաժեշտ էր, հնամենի «ամրոց-սրբավայրը» համալրելով, ստեղծել միապետի ինքնիշխանութեան վեհութիւնն ու հզօ-

3 Քաղաքական իրադրութիւնը Խոսրով Կոտակի գահակալութեան տարիներին՝ ըստ **Փաւստոս Բուզանդ**, *Հայոց պատմութիւն* (թարգմ. եւ ծնթ. Ստ. Մալխասեանի), Երեւան, 1987 (այսուհետեւ՝ Բուզանդ), III, Գ, Դ, Է, Ը, Թ, ԺԱ

4 **Մովսէս Խորենացի**, *Հայոց պատմութիւն* (թարգմ., ներած. եւ ծնթ. Ստ. Մալխասեանի), Երեւան, 1990 (այսուհետեւ՝ Խորենացի), III, Ը

րութիւնը արտայայտող ճարտարապետական արքայավայել ամբողջական միջավայր: Արքայի հրամանով ստեղծուեց երկու առանձին կաղնետունկ պարսպապատ տարածք՝ «թագաւորութեան որսի՝ զբօսանքի եւ ուրախութեան տեղեր»՝ երկու տարբեր տեղանուններով[5]: «Գետի ընթացքով դէպի ներքեւ, մինչեւ Տիկնունի ապարանքը» տնկած մարին նա կոչեց «Տաճար մայրի»=«Սրբազան կաղնուտ», որ բնապաշտական հնաւանդ աշխարհայեցողութեան ակնյայտ դրսեւորում էր[6]: Ազատ գետի ջրառատ հովտում արքան դաշտը վերածեց անտառի, իրականացրեց բնապատկերային ճարտարապետական կազմակերպուած միջավայր, ուր եւ տեղադրեց արքունական ապարանքներ եւ կոչեց «Խոսրովակերտ»[7]:

Առաջնորդուելով բնապատկերային ճարտարապետութեան աւանդական սկզբունքներով՝[8] Խոսրով Կոտակն իրականաց-

5 Բուզանդ, III, Ը

6 Այս մասին մանրամասնօրէն տե՛ս **Գ. Քոչարեան**, *«Տաճար մայրի» կաղնետունկ անտառապուրակ*, «Հանդէս ամսօրեայ», 2004, թիւ 1-12, էջ 415-428:

7 Արքայական ապարանքի եւ որսատեղ-անտառապուրակի համադրութիւնը, որպէս արքաների «հանգստի եւ հաճոյքի վայրեր»=պարադիսներ, վկայուած է Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. I հազարամեակից ի վեր հարեւան տարածաշրջանում, Ասորեստանում՝ Սարգոնեանների օրօք, իսկ աւելի ուշ՝ սփռուած Աքեմենեան (հետագայում՝ Սելեւկեան) աշխարհակալ արքաների լայնածաւալ կայսրութեան տիրոյթում (մանրամասնօրէն եւ համապատասխան գրականութիւնը տե՛ս **Գ. Քոչարեան**, *Խոսրովակերտ արքայական անտառապուրակը*, «Հանդէս ամսօրեայ», 2005, թիւ 1-12, էջ 339-342):

8 Բնապատկերային ճարտարապետութեամբ կերտուած՝ Երուանդ Վերջինի՝ Երուանդաշատ+Երուանդակերտ+Ծննդոց անտառ, Տիգրան Մեծի՝ Տիգրանակերտ+արուարձանային ծառազարդ արքայական պալատ+արգելոց-որսատեղեր, արքայանիստ շքեղ համալիրների մասին տե՛ս **Գ. Քոչարեան**, *«Արքունի ծառազարդ ապարանքը» Երուանդակերտից առաջ եւ յետոյ*, Գիտական աշխատութիւններ, II, Գիւմրի, 1999, էջ 120-126:

րեց քաղաքաշինական մի ամբողջութիւն կազմող իր կուռ մտայղացումը՝ Դուին/արքունի նստավայր + Խոսրովակերտ/արքայական ծառազարդ ապարանք-անտառապուրակ + Տաճար մայրի/արքայական կաղնետունկ անտառ-արգելոց = արքայանիստ համալիր կառոյց:

Նա «Նորակերտ Դուինի» բնակչութիւնը համալրեց հելլենիստական քաղաքաշինութեանը բնորոշ սինոյկիսմոսի՝ համաբնակեցման աւանդոյթով[9]: Արքայի նախաձեռնութեամբ Արտաշատից տեղափոխուեց բնակիչների որոշակի «անհրաժեշտ հատուած»՝ իշխանամէտ ուժեր, առեւտրա-արհեստաւորական խաւեր: Արքայի ընձեռած արտօնութիւնների շնորհիւ եւ յատկապէս՝ որ Երասխի ճահճուտներից «անմաքուր ջերմ օդը գարշելի հոտ էր բուրում, ...Արտաշատում բնակւողները ... կամաւ յանձն առան այս տեղափոխութիւնը»՝[10] նորատունկ կաղնուտներով շրջապատուած Դուին[11]:

Հելլենիստական դարաշրջանի քաղաքաշինական աւանդոյթներով իր ստեղծած արքայանիստ նոր քաղաքը Խոսրով Կոտակը, ի տարբերութիւն նախորդների, չկոչեց իր անունով: Նա Խոսրովակերտ կոչեց իր կերտած արքայական ծառազարդ ապարանք-անտառապուրակը:

Արքայի նպատակը հեռահար էր եւ յստակ՝ ի դէմս նոր, բարգաւաճ, եկամտաբեր արքայանիստ քաղաքի ունենալ ուժեղ

9 **Г. А. Тирацян**, *О некоторых особенностях основания города Двин*, ,,Третий всесоюзный симпозиум по проблемам эллинистической культуры на Востоке,, Тезисы докладов, Ер., 1988, с. 85-86.

10 **Խորենացի**, III, Ը

11 Խոսրով Կոտակի անտառատնկման ձեռնարկն ինքնին բնապահպանական մեծ նշանակութիւն ունէր: Սա, փաստօրէն, բուսական եւ կենդանական աշխարհի վերարտադրութիւն էր, որն աներկբայօրէն նպաստեց շրջապատի միկրոկլիմայի բարելաւմանը (տե՛ս **Գ. Քոչարեան**, *«Տաճար մայրի» կաղնետունկ անտառապուրակ*):

քաղաքական յենարան, նախարարութեան օրաւուր աճող, անջատողական միտումները դիմագրաւելու համար:

Նորակերտ Դուինի քաղաքայնացման գործընթացը Դ-Ե դդ. անցումային-խառը ժամանակաշրջանում, հայոց հելլենիստական քաղաքների, Արշակունեաց կենտրոնական իշխանութեան ճգնաժամի եւ անկման, ազգային-ազատագրական համաժողովրդական շարժումների ծաւալման պայմաններում կայացաւ դժուար եւ տեւականօրէն: Դուինը երկար մնաց՝ մայրաքաղաքի իր կարգավիճակը պահպանած, միջազգային առեւտրի ոլորտում համբաւ վայելող Արտաշատի հովանու ներքոյ: Արդարեւ, մէկ հարիւրամեակ եւ աւելին Դուինն այլեւս չյիշատակուեց գրաւոր աղբիւրներում: Թէպէտ պեղումներով բացայայտուած է, որ կառուցապատումն այստեղ շարունակւում էր[12]:

Մայրաքաղաքի դերն Արտաշատից Դուինին անցնում էր աստիճանաբար՝ Դուինի կառուցապատմանն ու համաբնակեցմանը, տնտեսական բարգաւաճմանն ու քաղաքական վարկանիշի աճին, միաժամանակ եւ Արտաշատի ամայացմանը համընթաց: Ե դ. վերջին Արտաշատը Դուինի մատոյցները պաշտպանող գիւղաքաղաքամրոց էր.[13] Դուինը մարզպանական Հայաստանի կենտրոնն էր, Ամենայն հայոց կաթողիկոսի նստավայր, առաջաւորասիական տարանցիկ առեւտրի կարեւորագոյն հանգոյցակէտ, իսկ Արտաշատի մերձքաղաքային տնտեսական տարածքը, որն ընդգրկում էր «Աշխարհացոյց»-Ոստան Հայոց գաւառը,

12 **A. Kalantarian**, Dvin. Histoire et archéologie de la ville médievale, pp. 63-66.

13 **Ղազար Փարպեցւոյ**, *Պատմութիւն Հայոց թուղթ առ Վահան Մամիկոնեան* (քննական բնագիր Գ. Տէր-Մկրտչեանի եւ Ստ. Մալխասեանի), Երեւան, 1982, Գ, ԿԷ, ՀԸ

© National Library of Armenia

ում ներկայանում էր՝ որպէս «Ոստան Դըւնոյ»[14]:

Դուին քաղաքի կայացումն ու բարգաւաճումը, տարածաշրջանում կատարած կարեւոր դերը կանխորոշուած էր՝ Խոսրով Կոտակի՝ արքունիքը տեղափոխելու հեռահար, վճռորոշ քայլով, որով եւ դրուեց Դուինի միջնադարեան շրջանի պատմութեան սկիզբը: Իրաւամբ, միջնադարեան Դուինը Խոսրով Կոտակ Արշակունու ծաւալուն, իրատեսական ծրագրի իրականացման անուրանալի արդիւնքն էր:

14 **Ս. Տ. Երեմեան,** *Հայաստանը՝ ըստ «Աշխարհացոյց»-ի (Փորձ՝ 7-րդ դարի հայկական քարտէզի վերակազմութեան ժամանակակից քարտէզագրութեան հիմքի վրայ)*, Երեւան, 1963, էջ 49

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՕՁՆԵՑՈՒ «ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ» ԺՈՂՈՎԱԾՈՅԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԵՒ ԱՆԱՆԻԱ ՄՈԿԱՑԻՆ

Ալեքսան Յակոբեան

Խոսրով Անձեւացի եպիսկոպոսի «ապաստամբութեան» դէմ ուղղուած Անանիա Մոկացի կաթողիկոսի (941-965 թթ.) երեք տարաժամանակեայ թղթերի տուեալները վաղուց արդէն օգտագործւում են բանասէրների կողմից «Կանոնագիրք Հայոց» ժողովածոյի խմբագրութիւնների ընդգրկման ճշգրտումների եւ աղբիւրագիտական ուսումնասիրութեան համար[1]*: Հայոց այդ եռանդուն եւ յաջողակ հոգեւոր առաջնորդն ու մատենագիրն*[2] *իր ընդդիմախօսների հետ բանավէճերում յղումներ է կատարել բազմազան աղբիւրների, այդ թւում նաեւ Կանոնագրքին՝ տալով վերնագրեր, հեղինակների անուններ, ընդարձակ հատուածներ եւ լրացուցիչ այլ տուեալներ, որոնց արժէքը ժամանակակից աղբիւրագէտի համար դժուար է գերագնահատել: Նրա հաղորդած տեղեկութիւններն օգնում են վերջնական ճշգրտումներ կատարելու նաեւ «Կանոնագիրք Հայոց» ժողովածոյի խմբագրութիւնների մասին մեր կողմից առաջարկուած նոր պարզաբանումների լոյսի ներքոյ*[3]*:*

«Կանոնագիրք Հայոց» ժողովածոյի գիտական ուսումնասիրութիւնն սկսուել է ԺԹ դարի երկրորդ կէսում, երբ ի յայտ եկան թէ՛ առաջին հետազօտութիւնները (Հ. Յ. Գաթրճեան, Հ. Յ. Տաշեան, Ա. արքեպս. Մխիթարեան եւ այլք), թէ՛ առանձին կանոնախմբերի քիչ թէ շատ համեմատական հրատարակութիւնները: Կարեւոր էր, որ Ա. արքեպս. Մխիթարեանի կողմից հրատարակուած մի քանի ժողովական կանոնախմբեր վերցուած էին Ս. Էջմիածնի մատենադարանի թիւ 751 (ըստ Կարինեան ցուցակի) գրչագրից, որը նաեւ այն ժամանակ մասնագէտներին յայտնի ամենավաղ ձեռագիրն էր՝ ընդօրինակուած 1368-ին Կաֆայում (ներկայումս՝ Մաշտոցի անուան Մատենադարանի, այսուհետեւ՝ ՄՄ, ձեռ. թիւ 659): Միաժամանակ, ուսումնասիրողներն առիթ էին ունենում համեմատելու «Կանոնագրքի» տարբեր խմբագրութիւններ եւ դնելու դրանցից աւելի

1 Տե՛ս **Հ. Ն. Ակինեան,** *Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի հայրապետի առ Վրթանէս եպիսկոպոսապետ Սիւնեաց Յաղագս կարգաց եկեղեցւոյ*, Վիեննա, 1930, էջ 108. *Կանոնագիրք Հայոց*, Աշխատասիրութեամբ **Վ. Յակոբեանի**, հտ. Բ, Երեւան, 1971, էջ XVI-XIX:

2 Նրա մասին լաւագոյն ուսումնասիրութիւնը շարունակում է մնալ Գալուստ Տէր-Մկրտչեանի յօդուածը. *Անանիա Մոկացի*, «Արարատ», Վաղարշապատ-Ս. Էջմիածին, 1897, էջ 91-96: Այդ հանդէսի նոյն տարուայ միւս պրակներում տպագրուել են նաեւ Մոկացու թղթերի՝ Միաբանի պատրաստած բնագրերը (այսպէս կոչուած «Էջմիածնական Գիրք թղթոցի» երկու գրչագրերից, ներկայումս՝ Մաշտոցի անուան Մատենադարանի թիւ 2966 եւ 3062), այդ թւում՝ 275-288 էջերում՝ «Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Պատճառ յաղագս զԽոսրով նզովելոյն զԱնձեւացւոց եպիսկոպոսն», «Նորին տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս որ ասեն, թէ մի պատիւ հայրապետին եւ եպիսկոպոսին եւ վասն մի լինելոյ կոչմանն», «Նորին տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի»: Անանիա Մոկացու մասին տե՛ս նաեւ **Մ. արքեպս. Օրմանեան,** *Ազգապատում*, հտ. Ա, Վաղարշապատ-Ս. Էջմիածին, 2001, էջ 1265-1295. **F. Macler,** *Anania Mokatsi, écrivain arménien du Xe siècle*, Révue des études byzantaines, N 101, Louvain, 1930, էջ 5-15:

3 Տե՛ս **Ա. Յակոբեան,** *Յովհաննէս Օձնեցու Նորայայտ տօնացոյցային երկը՝ «Նախահաւատքումն պատմութեան այսմ բանից՝ Յովաննու Վերծանաւղի», «Հանդէս ամսօրեայ»*, ՃԻ տարի, Վիեննա-Երեւան, 2006, էջ 91-98:

© National Library of Armenia